



**«ԱՐՅԱՆ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ

«28» մարտի 2011 թ.

N 2-2011/01

ք.Ստեփանակերտ

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԱՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 12.2 կետի թ) ենթակետը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ««Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության իրականացվող հրապարակային մրցույթի կազմակերպման մասին» կանոնակարգի 10-րդ կետը և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի 26.03.2011թ. նիստի 2-2011 արձանագրությունը՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհուրդը որոշում է՝

Ընկերության 2011 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության համար ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով՝

- Ս. Թևոսյան – Ընկերության Տնօրենների խորհրդի նախագահ
- Կ. Պետրոսյան - Ընկերության Տնօրենների խորհրդի անդամ
- Վ. Բեգլարյան - Ընկերության Տնօրենների խորհրդի անդամ, գլխավոր տնօրեն
- Ա. Պետրոսյան - Ընկերության վերստուգող հանձնաժողովի նախագահ:

Խորհրդի նախագահ՝

Ս. Թևոսյան